Հաշվետվություն

2025 թվականի հուլիսի 1-ից 3-ը Բելգիայի Թագավորություն, (Բրյուսել) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**
   Սուրեն Թովմասյան, Կադաստրի կոմիտեի ղեկավար

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Բելգիայի Թագավորություն, Բրյուսել, 2025 թվականի հուլիսի 1-ից 3-ը

3. **Հրավիրող կողմը.**
   «Եվրոգեոգրաֆիքս» ասոցիացիա

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն Եվրոգեոգրաֆիքս ասոցիացիայի կառավարման խորհրդի հերթական նիստին

5. **Քննարկված թեմաները.**
   - Ասոցիացիայի ֆինանսական հաշվետվության ներկայացում,
   - «Բաց (հասանելի) քարտեզներ Եվրոպայի համար 2» (OME2) ծրագրի գործառնական թարմացում՝ ներառյալ հիմնական կատարողական ցուցանիշներ (KPIs),
   - Անդամակցության ռազմավարություն (անդամակցության աճ, բաժանորդագրությունների նոր մոդել),
   - Անդամակցության բաժանորդագրություններին նվիրված աշխատաժողով/քննարկում,
   - Ասոցիացիայի վերանայված կանոնադրության քվեարկում,
   - Ասոցիացիայի վերանայված կանոնադրության հաստատում:

6. **Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր.**

Ամփոփվեց Ռիգայում կայացած գլխավոր ասամբլեայի արդյունքները և նախանշվեց հետագա անելիքները: Անդրադարձ կատարվեց Կառավարման խորհրդի նախորդ հանդիպման արձանագրության կետերին, ներկայացվեցին ֆինանսական հաշվետվությունը, հիմնական կատարողական ցուցանիշները (KPIs), «Բաց (հասանելի) քարտեզներ Եվրոպայի համար 2» (OME2) ծրագրի շրջանակներում իրականացված վերջին աշխատանքները: Տեղի ունեցան քննարկումներ, որոնք առնչվում էին ասոցիացիայի ընթացիկ գործունեությանը, աշխատելաոճին և կազմակերպչական հարցերին:

Քննարկումները հիմնականում վերաբերում էին անդամակցության նոր

ռազմավարությանը, որն իր մեջ ներառում է անդամակցության աճ և բաժանորդագրությունների նոր մոդել: Այս համատեքստում կառավարման խորհրդի անդամների մասնակցությամբ տեղի ունեցավ անդամակցության բաժանորդագրություններին նվիրված աշխատաժողով/քննարկում:

Այնուհետև կայացավ արտահերթ գլխավոր ասամբլեան, որի ընթացքում քվեարկության դրվեց ասոցիացիայի վերանայված կանոնադրությունը՝ անդամակցության ընդլայնման ծրագիրն իրականացնելու համար:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Պայմանավորվածություն ձեռք բերվեց.

- 2025 թվականի հոկտեմբերի 9-ին տեսակապի միջոցով հանդիպել և քննարկել հաշվետու ժամանակաշրջանում ասոցիացիայի շրջանակներում իրականացված աշխատանքները,
- 2025 թվականի դեկտեմբերի 2-4-ը ֆիզիկապես հանդիպել Եվրոգեոգրաֆիքսի կառավարման խորհրդի անդամների հետ Բրյուսելի գլխավոր գրասենյակում՝ ամփոփելու աշխատանքային տարին, ինչպես նաև հանդիպելու Գլխավոր քարտուղար և գործադիր տնօրենի ու ՄԱԿ-ի գլոբալ երկրատարածական տեղեկատվության կառավարման փորձագետների կոմիտեի գործադիր հանձնաժողովի հետ:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Առաջարկվեց, որպեսզի կառավարման խորհրդի անդամները հետամուտ լինեն ասոցիացիայի շրջանակներում իրականացվող աշխատանքներին անդամ պետությունների ներգրավվածության բարձրացմանը և մասնագիտական համայնքների միջև համագործակցության խթանմանը:

Կարևորվեց ասոցիացիայի շրջանակներում հետագա հնարավոր համագործակցության ընդլայնման և նոր նախաձեռնությունների համատեղ իրագործման անհրաժեշտությունը:

9.Ստորագրությունը, ամսաթիվը:

Սուրեն Թովմասյան 07.07.2025 թ.

Հավելված N 2 ՀՀ վարչապետի N 326-Ն որոշման
Հավելված N 3 ՀՀ վարչապետի N 1230-Ն որոշման

Հաշվետվություն
Գործուղման ծախսերի վերջնահաշվարկի մասին

1 Մարմնի անվանումը Կադաստրի կոմիտե

2 Գործուղման մասին իրավական ակտի համարը ՀՀ Վարչապետի Որոշում 16.06.2025թ. N 516-Ա

3 Անուն, Ազգանուն, զբաղեցրած պաշտոն Սուրեն Թովմասյան Կադաստրի կոմիտեի ղեկավար

4 Գործուղման վայրը Բելգիայի Թագավորություն, քաղաք Բրյուսել

5 Գործուղման ժամկետները 01.07.2025-03.07.2025թթ.

6 Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը(Կադաստրի կոմիտեի 2025 թվականի (ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)

1. ճանապարհածախս, 2. գիշերավարձ, 3. օրապահիկ

ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Անուն, ազգանուն	Ընդամենը (հազ. դրամ)
		Սուրեն Թովմասյան	
Ճանապարհածախս	Ավիածառայության տեսակը էկոնոմ դաս		
	Ավիածառայության արժեք (դրամ)	384,000.00	384.0
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) ԵՎՐ	206.0	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	90,932.52	
	Օրերի քանակ	2	
	Ընդամենը (դրամ)	181,865.04	181.9
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) ԵՎՐ	126	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	55,618.9	
	Օրերի քանակ	3	
	Ընդամենը (դրամ)	166,856.8	166.9
Ընդամենը ծախսեր (դրամ)			732.7

Գլխավոր քարտուղար Միհեր Խաչատրյան

Ֆինանսատնտեսագիտական վարչության պետ/
գլխավոր հաշվապահ Գևորգ Սարդարյան
07.07.2025թ.